



Անի Նիկողոսյան

ԿՈՐԱՏԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՆ ՄԻՋԵՎ

ԼՂ բռնի տեղահանված
այրիների ձայնը

Ինտագրացիան էսսե

Սույն հրապարակումը պատրաստվել է Հետազոտական ռեսուրսների կոլեկցիայի կենտրոն (ՀՌԿԿ)-
Հայաստան հիմնադրամի կողմից իրականացված «ԼՂ բռնի տեղահանված կանանց ձայնը լսելի»
ծրագրի շրջանակներում, Հայաստանում կանանց հիմնադրամի (ՀԿՀ) ֆինանսական աջակցությամբ:

Էսսեում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակին և կարող են չհամընկնել ՀՌԿԿ-
Հայաստան հիմնադրամի և Հայաստանում կանանց հիմնադրամի տեսակետների հետ:

Էսսեի կամ դրա առանձին մասերի վերահրատարակումը կամ վերարտադրությունը Էլեկտրոնային
կամ տպագիր տարբերակներով պետք է իրականացվի պատշաճ մեջբերումներով:

Մեջբերման օրինակ.

Նիկողոսյան, Ա. (2024). Կորստի և ինտեգրման միջև. ԼՂ բռնի տեղահանված այրի կանանց ձայնը: Հետազոտական Էսսե:
Երևան: Հետազոտական ռեսուրսների կոլեկցիայի կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամ: Հայաստանում կանանց
հիմնադրամ:

© - 2024 - Հետազոտական ռեսուրսների կոլեկցիայի կենտրոն-Հայաստան հիմնադրամ:
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Հրատարակչի կողմից.

Այս հետազոտական Էսսեն ամբողջությամբ հեղինակել է «ԼՂ բռնի տեղահանված կանանց ձայնը լսելի»
ծրագրի շահառու՝ Անի Նիկողոսյանը: Էսսեի հիմքում փոքրամասշտաբ որակական ուսում-
նասիրություն է, որը ևս իրականացվել է հեղինակի կողմից: ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամը ծրագրի
շրջանակներում շահառուին տրամադրել է հետազոտական և մեթոդաբանական աջակցություն՝
միաժամանակ թույլ տալով, որ հեղինակը լիովին ազատ զգա Էսսեն շարադրելիս ընտրել իրեն հար-
մար ոճը և աշխատանքի կառուցվածքը: Ուստի, ՀՌԿԿ-Հայաստանի կողմից խմբագրական, այդ
թվում շարադրանքի ոճի և տեխնիկական հատկությունների նկատմամբ իրականացված միջամ-
տությունները ևս հասցված են նվազագույնի: Ընթերցողին խորհուրդ ենք տալիս նկատի առնել, որ
Էսսեն հեղինակային, ինքնառեֆլեքսիվ և ինչ-որ առումով փորձարարական բնույթի աշխատանք
է, որի միջոցով հեղինակը փոխանցում է ԼՂ-ից բռնի տեղահանված այրի կանանց ձայնը և իր իսկ
փորձառությունը: Էսսեն չի հավակնում համապատասխանել ակադեմիական հենքով իրականաց-
ված հետազոտություններին առաջադրվող բոլոր պահանջներին: Միաժամանակ, Էսսեն պարունա-
կում է արժեքավոր, խորքային և հետազոտական առումով ազնիվ կյուրի, որը կարող է հիմք ծառայել
հետագա հետազոտությունների համար և խոցելի խմբերին պատկանող կանանց հզորացմանն
ուղղված ծրագրերի տվյալահեն պլանավորման ու իրականացման համար:

ԿՈՐՄՏԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՄԱՆ ՄԻՋԵՎ

ԼՂ բռնի տեղահանված
այրի կանանց ծայնը

Յետագոտական Էսսե



Երբ խոսում ենք պատերազմների մասին, առաջին հերթին պատկերացնում ենք զենքերը, ռումբերն ու զոհված զինվորներին: Սակայն պատերազմի ծանր հետևանքները միայն մարտի դաշտում չեն. դրանք խորապես ազդում են նաև նրանց վրա, ովքեր պատերազմի անմիջական մասնակիցները չեն: Այրի կանայք և որբ երեխաները հաճախ դիտվում են պարզապես որպես պատերազմի «հետևանքներ», մինչդեռ նրանք նույնպես կրում են այս ողբերգության ծանրագույն բեռը:

Ընդունված է կարծել, որ պատերազմում ամենաշատը տուժում են տղամարդիկ, ովքեր զոհաբերում են իրենց կյանքը՝ պաշտպանելու իրենց ընտանիքն ու հայրենիքը: Կանանց հաճախ համոզում են, որ այս զոհաբերությունները արվում են հենց իրենց պաշտպանության համար, սակայն պատերազմից հետո հենց կանայք են մնում այդ զոհաբերությունների իրական գինը վճարողները:

Պատերազմի ընթացքում և դրանից հետո կանանց կարիքները սովորաբար մնում են հետին պլանում՝ զիջելով առաջնայնությունը ընտանիքների բարօրության ապահովմանը: Նրանք հաճախ չեն համարձակվում բարձրաձայնել իրենց անձնական կարիքների մասին, սովորելով հավատալ, որ իրենց ցանկություններն ու խնդիրները երկրորդական են իրենց ամուսինների և ընտանիքի ճակատագրերի համեմատ: Այս իրավիճակը ոչ միայն սահմանափակում է կանանց դերը հետպատերազմյան վերականգնման գործընթացում, այլև ընդգծում է նրանց կարիքների անտեսման անարդարությունը:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 19-ին, Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախմբի պատասխանատվության գոտում, Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը սկսեցին լայնամասշտաբ ռազմական գործողություններ Լեռնային Ղարաբաղի դեմ: Մինչ այդ, շուրջ 9 ամիս շարունակված Լաչինի միջանցքի արգելափակումը հանգեցրել էր ծանր հումանիտար ճգնաժամի՝ սովի, առողջապահական համակարգի խաթարման և մարդու հիմնարար իրավունքների զանգվածային խախտումների: 24-ժամյա ռազմական գործողությունների հետևանքով զոհվեց ավելի քան 200 մարդ:

Այս իրադարձությունների արդյունքում Լեռնային Ղարաբաղի ողջ բնակչությունը ստիպված եղավ լքել իր տները զինված ուժի սպառնալիքի ներքո: Բռնի տեղահանման հետևանքով, Հայաստանի Հանրապետություն տեղափոխվեց ավելի քան 100,000 մարդ¹: Տեղահանման ընթացքում 64 մարդ, այդ թվում երեխաներ և տարեցներ, մահացան սննդի և առողջապահական ծառայությունների բացակայության պատճառով²:

Ինքս լինելով տեղահանված՝ կրում եմ տան, համայնքի և անվտանգության կորստի ցավոտ փորձառությունը: Ինձ համար այս աշխատանքը ոչ միայն հետազոտական հետաքրքրության արդյունք է, այլ նաև անձնական ռեֆլեքսիայի հնարավորություն՝ վերլուծելու և հասկանալու այն, ինչի միջով մենք բոլորս՝ տեղահանվածներս, անցել ենք: Կորստի այս շերտերը դարձան ոչ միայն կենսական, այլև իմ պատմության մի մասը, որը հաճախ արտացոլվում է Էսսեում:

Այս իրավիճակում տեղահանվածները բախվեցին եզակի դժվարությունների, որոնք չեն սահմանափակվում միայն հակամարտության անմիջական վտանգով: Այս դժվարությունները ներառում են տեղահանությունը, ընտանիքի անդամների կամ բնակավայրի կորուստը, հոգևոր և մշակութային ժառանգության կորուստը, ինչպես նաև հակամարտության գոտում ապրելու հոգեբանական հետևանքները: ԼՂ-ից բռնի տեղահանումը զգալի հարվածի տակ է դրել հատկապես խոցելի խմբերին՝ մասնավորապես կանանց, երեխաներին և հաշմանդամություն ունեցող անձանց:

Կանանց համար բռնի տեղահանությունը ուղեկցվում է բազմաշերտ փորձառություններով, որը ներառում է ինչպես նոր միջավայրի տնտեսական և սոցիալական մարտահրավերներ, այնպես էլ ընտանիքի և համայնքի կառուցվածքների փոփոխության հետևանքներ: Նրանք հաճախ բախվում են գեղերային խտրականությանը, ֆինանսական պատասխանատվությունների ավելացմանը և ինամքի բեռի մեծացմանը, ինչը խորացնում է նրանց խոցելիությունը: Բացի այդ, նոր միջավայրում նրանք կարող են զգալ հասարակական կարծրատիպերի կամ խտրականության ազդեցությունը, որը սահմանափակում է նրանց սոցիալական ինտեգրման հնարավորությունները:

1. Հայաստանի Հանրապետության կառավարություն, «Տեղահանման վերաբերյալ պաշտոնական հայտարարություն», հասանելի է 27 նոյեմբերի 2024 թ., <https://www.gov.am/en/news/item/10371/>:
2. «Ազգությամբ զտման և պատերազմի հանցագործությունների վերաբերյալ հետաքննության գործընթացի ամփոփում», Հայաստանի հետաքննող լրագրողներ, հասանելի է 27 նոյեմբերի 2024 թ., <https://www.investigative.am/en/news/summery-on-the-process-of-investigation-of-cases-on-ethnic-cleansing-committed-in-nagorno-karabakh-and-war-crimes-committed-during-it>:

Այդուհանդերձ, կանանց խմբում հատկապես խոցելի են այրի կանայք, ովքեր միաժամանակ կրում են և՛ բռնի տեղահանվածի, և՛ կնոջ կենսափորձը, և՛ այրի լինելու առանձնահատուկ դժվարությունները: Ամուսնու կորստի տրավման գումարվում է անվտանգության կորստի և սոցիալական հենարանների բացակայության հետ, ինչը նրանց դարձնում է խիստ խոցելի թե՛ սոցիալապես, թե՛ հոգեբանորեն: Նրանք բախվում են ընտանիքի հենասյունի դերակատարման և նոր միջավայրում իրենց դերի վերաիմաստավորման բարդությունների հետ: Դրան գումարվում է հասարակության կողմից գոհերի կանանց վրա դրված «*ուժեղ*», «*ռազմատենչ*», «*իրենց ցավի հետ հաշտվելու ունակ*» լինելու պատասխանատվությունը և այդ ակնկալիքներով պայմանավորված բարոյական ճնշումները³:

Այրի կանայք հաճախ միաժամանակ բախվում են տրավմայի, սոցիալական մեկուսացման և տնտեսական անապահովության խնդիրների: Նրանց փորձառությունը կարևոր է հասկանալու համար, թե ինչպես են գենդերային և սոցիալական գործոնները խաչվում ձևավորելով կյանքի յուրահատուկ մարտահրավերներ: **Այս էսսեն նպատակ ունի վերլուծել, թե ինչպիսի սոցիալական և հոգեբանական դժվարությունների են բախվում բռնի տեղահանված այրի կանայք՝ նոր միջավայրում ինտեգրվելու ընթացքում:** Ուսումնասիրությունը նաև կանդրադառնա, թե ինչպես կարող են աջակցության ցանցերը և պետական քաղաքականությունները մեղմացնել այս խմբի խոցելիությունը և նպաստել նրանց կայուն ինտեգրմանը:

Հետազոտական էսսեն գրվել է **Ֆենոմենոլոգիական որակական մեթոդաբանությամբ**, որը կենտրոնանում է բռնի տեղահանված կանանց սուբյեկտիվ փորձառությունների խորքային վերլուծության վրա: Տվյալները հավաքագրվել են ոչ **կառուցվածքային հարցազրույցների** միջոցով՝ ներառելով 6 այրի կին (3-ը՝ գյուղական, 3-ը՝ քաղաքային միջավայրերից), ինչը թույլ է տալիս վերլուծել ինտեգրման գործընթացի տարբերությունները՝ հիմնված միջավայրային, մշակութային և սոցիալական պայմանների վրա: Հատուկ ուշադրություն է դարձվել այն հարցերին, թե ինչպես են գյուղական և քաղաքային միջավայրերի տարբերությունները ազդում գենդերային դերերի, խտրականության և սոցիալական աջակցության հասանելիության վրա: Հավաքված տեղեկատվությունը համադրվել է դաշտում ամկա գրականության և իրավական դաշտի վերլուծությունների հետ:

3. «Պատերազմը կնոջ դիտանկյունից. «Կանայք հանուն խաղաղության» արշավի մասին», Սոցիոսկոպ ՀԿ, հասանելի է 27 նոյեմբերի 2024 թ., https://socioscope.am/archives/3347#_ftn35:



ՏԵՂԱՀԱՆՄԱՆ ՓՈՒԼ

1. Հիմնական սոցիալական և հոգեբանական դժվարությունները տեղահանման ընթացքում

Պատերազմն ուսումնասիրելը սոցիոլոգիայի մեջ միշտ եղել է կենսական նշանակություն ունեցող ուղղություն՝ հաշվի առնելով դրա ազդեցության մասշտաբն ու խորությունը ինչպես հասարակությունների, այնպես էլ անհատների մակարդակում: Սոցիոլոգիական տեսանկյունից, պատերազմը դիտվում է ոչ միայն որպես քաղաքական կամ ռազմական երևույթ, այլև որպես սոցիալական կառուցվածքների խզման, արժեքային համակարգերի վերափոխման և անհատական ինքնությունների փոփոխության գործոն:

Պատերազմը, ըստ Թալկոթ Փարսոնսի (1951), ներկայացնում է սոցիալական համակարգի համապարփակ ճգնաժամ, որի ընթացքում խախտվում են կարգի և անվտանգության հիմնարար տարրերը: Այս ճգնաժամը դրսևորվում է երեք հիմնական մակարդակներում

- 1. Կառուցվածքային.** Հասարակության ինստիտուցիոնալ համակարգերի խզում, ներառյալ համայնքային աջակցության ցանցերի փլուզումը:
- 2. Համայնքային.** Համայնքների համախմբման կամ անկման, սոցիալական կապերի վերակազմավորման խնդիրներ:
- 3. Անհատական.** Տրավմայի, վշտի և գոյատևման համար պայքարի մակարդակում⁴:

Պատերազմն ու տեղահանությունը հատկապես ընդգծված կերպով անդրադառնում են կանանց վրա, որոնք հաճախ դառնում են ընտանիքների հիմնական հոգսը կրողները: Սինթիա Էնլոուն (1990) շեշտում է, որ պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում կանանց փորձառությունները ներառում են ոչ միայն ֆիզիկական վտանգի և տնտեսական դժվարությունների հաղթահարում, այլև ընտանեկան պատասխանատվության վրա հիմնված հոգեբանական ծանրաբեռնվածություն⁵:

Պատերազմի ընթացքում մարդիկ հաճախ բախվում են գոյատևման համար հիմնարար ինստիտուտներին, որոնք արտահայտվում են վախի, հուսահատության, կամ ինքնապահպանման անհրաժեշտության տարբեր ձևերով: Տարբեր սոցիալական դերերի, մասնավորապես՝ մայրության և ամուսնական պարտականությունների հետ զուգորդված, պատերազմը դառնում է անհատի և հասարակության միջև հարաբերությունների վերաիմաստավորման հարթակ:

2023թ-ի արցախյան պատերազմը վերապրած այրի կանանց պատմությունները պատկերում են պատերազմի ընթացքում ապրած վախն ու անօգնականությունը՝ ընդգծելով, թե ինչպես է այդ ժամանակաշրջանը խաթարում մարդկանց կյանքի սովորական ընթացքը:

4. Talcott Parsons, *The Social System* (London: Routledge & Kegan Paul, 1951), pp. 428-432:
 5. Cynthia Enloe, *Bananas, Beaches and Bases: Making Feminist Sense of International Politics* (Berkeley: University of California Press, 1990), pp. 195-202:

«19-ի գիշերը, որ 20-ը պիտի լուսանա ամենասահավորն էր, էդ արկերը ոնց էին մեր տան վերևից գնում, երեխեքը լացում էին վախից, չգիտեի ոնց պաշտպանեմ, մենակ ես ու սկեսուրս էինք ու 4 երեխաներս»: (36 տ., գյուղ. համայնք)

«Սեպտեմբերի 11-ին ծնվեց աղջիկս կեսարյան վիրահատությամբ, 16-ին դուրս գրվեցի հիվանդանոցից, 19-ին ժամը 1-ին որ սկսվեց, չգիտեի ինչ անեմ, մեր տունը 2 հարկանի է, իջանք առաջին հարկ, երեխեն փոքր, ցուրտ, ես վիրահատված... չգիտեիք էլ ինչ ա կատարվում, լույս չկար, չէիք կարողանում ոչ մեկի հետ խոսել, կապերն էլ չկար»: (41 տ., քաղ. համայնք)

«Վախեցել ենք. ամբողջ գիշեր բոլոր հարևաններով հավաքված ենք եղել: Որ հարվածում էին, երեխեքին գրկում էինք, որ չվախենան»: (29 տ., գյուղ. համայնք)

«Դիրքերը հենց մեր աչքի դեմն էր, դպրոցի ապաստարանից կանգնած նայում էինք, թե ոնց են ռմբակոծում դիրքերը, որտեղ ամուսինս էր: Դրոշին էինք նայում ծածանվում է, թե չէ»: (45 տ., գյուղ. համայնք)

Բոլոր պատմություններում նշվում է, որ իրենց վիճակն ավելի են բարդացրել խուճապային և չճշտված տեղեկությունները: Շատ կանայք բացի ամուսիններից նաև իրենց որդիներին են ճակատ ուղարկել և անհանգստությունը կրկնապատկվել ու արտահայտվել է նաև սոմատիկ դրսևորումներով:

«Պանիկան, սուտ խոսակցությունները ավելի են լարել իրավիճակը»:

«Էդ պահին չգիտեի ուրախանայի, որ տղերքս եկել են, թե ամուսնուս կորստի ցավը ապրեի, ներսումս ամեն ինչ իրար էր խառնվել...ինսուլտ խփեց, ծախ կողմս չէր աշխատում»: (44 տ. քաղ. համայնք)

Բռնի տեղահանությունը, եթե մի դեպքում կապված է տան ու երկրի կորստի, մեկ այլ դեպքում համայնքային կապերի խզման կամ հիշողությունների հետ, ապա այրիացած կանանց համար ամենաբարդը՝ ամուսինների գերեզմանները թողնելն էր: Նրանց համար դա պարզապես ֆիզիկական հեռացում չէր, այլ բարոյական և էմոցիոնալ ծանր հարված, որը նրանք հաճախ ապրում են որպես դավաճանություն: Պատմությունները ցույց են տալիս, որ այս կանայք իրենց վշտի ու ցավի հետ զգում են պարտքի և մեղավորության զգացում: Նրանց համար խախտվում է նվիրված կին լինելու ինքնությունը:

«Ամենադժվարը վերջում Եղբայրական գերեզմանոցի մոտով անցնելն էր, խցանում էր, ոնց որ իմ բախտից լիներ, որ մի քիչ երկար մնամ մոտը: Իջել եմ գնացել, ներկ գտել, ներկով քարի վրա գրել անունը, ասել եմ գուցե հետո բերելը կստացվի: Մի քանի ժամ նստել եմ մոտը: Շատ ցավոտ էր, որ տղաներին դավաճանեցինք, իրենք մեզ համար իրենց կյանքը տվեցին, բայց մենք թողեցինք, դուրս եկանք»: (44տ. քաղ. համայնք)

«26-ին բենգին տվեցին, 27-ի առավոտ մենք դուրս եկանք. Լքեցինք մեր տունը, մեր գերեզմանները, իրան Էլ թողեցինք Էնտեզ, մենք եկանք: Դա մի ահավոր բան էր, չէի ուզում գերեզմանից դուրս գամ, որ ինքը Էնտեզ Է, մենք, գիտակցելով որ հետ չենք գալու, իրեն թողնում ենք Էդտեզ»: (41 տ., քաղ. համայնք)

«Սարսափի, դժողքի միջով ենք անցել: Ուզում էի մինչև վերջ մնալ, որ մի բան անեմ շիրիմները դուրս հանելու համար, բայց հետո մտածեցի պիտի դուրս գամ, որ երեխեքս փրկվեն»: (36 տ., գյուղ. համայնք)

Ադրբեջանական զինված ուժերը՝ բացի Արցախը Հայաստանին կապող Հակարիի հենակետից, հենակետեր են տեղադրել շրջաններից դեպի Ստեփանակերտ եկող մայրուղիներում: Կանանց հիշողություններում տեղահանության ժամանակ ծանր փորձառություններից Է եղել այդ հենակետերով անցնելը: Ինչպես կանանց վկայություններն են պատմում, ադրբեջանցի զինվորականների կողմից բացի ֆիզիկական սպառնալիքները՝ ենթարկվել են **հոգեբանական բռնության**, իսկ որոշ դեպքերում **սոցիալական և մշակութային ճնշումներ**ի. Կանայք գիտակցել են իրենց խոցելիությունն ու երեխաներին պաշտպանելու անկարողությունը, երբ մեքենա են ներխուժել զինված դիմակավոր ադրբեջանցի զինվորականներ: Շատ դեպքերում ունեցել են արժանապատվության կորստի զգացում՝ հանդիպելով առհամարական հայացքների ու ծաղրական արտահայտությունների՝ «ինչ օրն ենք ձեզ գցել», «ձեզ ինչը դուր չի գալիս, որ մենք այստեղ ենք»: Չնայած որոշ՝ ավելի հանգիստ պահերի նկարագրությունների՝ «երեխաներին քաղցրավենիք ու ջուր են առաջարկել», այս փորձառություններում իշխում Է նվաստացման և վտանգի զգացումը:

«Իրենք որտեղ որ կանգնած են, ամեն տեղ կանգնացրել են: Ես չէի ուզում գլուխս բարձրացնեմ, բայց տղայիս համար ահավոր վախենում էի: Դեկին 16 տարեկան տղաս էր, երեխա ա հայր ա կորցրել իրենց պատճառով, իրեն ասեցի ինչ խոսեն չխոսես, դրանք ամեն ինչի ունակ են: Երկու հոգով մտան մեր մեքենան, խաչը պոկեցին, նենց ցավ էի զգում այդ պահին»:

Հակարիում Էլ ծաղրում էին, որ երեխա Է վարում մեքենան, որ ինչ օրն են մեզ գցել»: (41 տ., քաղ. համայնք)

«Հարավում, որ ճանապարհը կտրել էին, թուրքերն էին, գալուց շատ վատ էին վերաբերվում մեզ , տղաս քիչ մնաց վիճեր մեկի հետ: Ասում էին «ձեզ ինչը դուր չի գալիս, որ մենք ստեղ ենք», լկտիաբար էին խոսում հայացքները՝ ծաղրական: Հակարիում հանգիստ Է եղել, արտառոց դեպք չի եղել, հակառակը՝ երեխաներին քաղցրավենիք ու ջուր էին առաջարկում»: (44տ. քաղ. համայնք)

«Մեկ Էլ Հակարին Էր շատ անտանելի, որ իրենց մոտով անցնում էինք, տղայիս մի 3 անգամ իջացրեցին մեքենայից»: (45 տ., գյուղ. համայնք)

Ճանապարհի ընթացքում ստիպված էին պայքարել ոչ միայն ցրտի և ֆիզիկական տառապանքների, այլև հարցերի անպատասխան մնալու հետ. «ուր ենք գնում», «ինչ Է մեզ սպասվում»:

«Էդ ճանապարհը դժողքի մեջով ենք անցել՝ 3 օր, ցրտի մեջ, Էն միտքը, որ Իրեն թողեցինք Էնտեղ, 8 օրենակ երեխան կրծքիս, ես իմ մասին չԷի մտածում, մենակ երեխեքիս մասին Էի մտածում. գնում ենք, բա որտեղ ենք գնալու, ուր եմ տանելու երեխեքիս»: (41 տ., քաղ. համայնք)

Այս խոսքերը արտացոլում են կանանց կրկնակի բեռը՝ մի կողմից պատասխանատվությունը երեխաների համար, մյուս կողմից՝ անորոշությունն ու վախը:

Պատմությունները վկայում են, որ կանայք տեղահանության ճանապարհին ստիպված են եղել կենտրոնական իրենց երեխաների փրկության վրա՝ իրենց անձնական ցավն ու վիշտը երկրորդ պլան մղելով: Պատերազմն ու տեղահանությունը ոչ միայն խաթարել են նրանց կյանքը, այլև ձևավորել են ապրումների խորքային փորձառություններ, որոնք կպահանջեն երկարաժամկետ հաղթահարում և աջակցություն:

2. Սոցիալական փոխհարաբերությունների փոխակերպումներ

Տրավմայի և վշտի կողքին կարևորվում է նաև սոցիալական փոխհարաբերությունների և աջակցության դերը: Այրի կանանց պատմությունները վկայում են հարազատների, հարևանների, ընկերների և համայնքի միասնության մասին, որն աջակցել է նրանց գոյատևման դժվարին փուլում: Վշտի առաջին օրերին ընկերներն ու հարևանները հոգ են տարել նրանց առօրյա խնդիրների մասին՝ երեխաներին խնամելով, սնունդ պատրաստելով: Տեղահանության ճանապարհին ամուսնու ընկերները ուղեկցում են, իսկ հարազատներն ու բարեկամները ապահովում էին տեղափոխման ընթացքը:

«Օրերով չԷի հասկանում ինչ Էի անում: Մենակ հիշում եմ, որ բարեկամներս գալիս էին երեխաներին տանում, բերում, հացը սարքում, ասում էին դու ոչ մի բանի մի խառնվի»: (36 տ., գյուղ. համայնք)

«Հարևանները, հարազատները, բարեկամները բոլորը հավաքվել են, օգնել են տեղը-տեղին»: (45 տ., գյուղ. համայնք)

«Ամուսնուս ընկերները ուղեկցում էին՝ մի մեքենան առաջն էր գնում, մյուսը հետևից էր գալիս, որ մենակ չլինեիք»: (41 տ., քաղ. համայնք)

Այս փոխհարաբերությունները վկայում են, որ անգամ պատերազմի պայմաններում մարդկային կապերն ու փոխօգնությունը մնում են կենսական նշանակության՝ օգնելով հաղթահարել ֆիզիկական ու հոգեբանական փորձությունները:



ԻՆՏԵԳՐԱՆ ՓՈՒԼ

Փախստականների և միգրանտների ինտեգրման մարտահրավերները սոցիալական գիտությունների կարևոր ուսումնասիրության ոլորտներից են: Ինտեգրման հայեցակարգը դիտվում է որպես դինամիկ գործընթաց, որն ընդգրկում է անհատների և հաստատությունների փոխազդեցությունը: Լոքվուդի (1964) տեսության համաձայն՝ ինտեգրումը կարելի է բաժանել երկու հիմնական տեսակի.

- Սոցիալական ինտեգրում, որն ընդգծում է անհատների միջև փոխգործակցությունն ու սոցիալական կապերի ստեղծումը,
- Համակարգային ինտեգրում, որն ուղղված է հաստատությունների և ինստիտուցիոնալ կառույցների միջև համագործակցության ամրապնդմանը⁶:

Բռնի տեղահանված բնակչության (ԲՏԲ) երկարաժամկետ տեղահանության դեպքում ինտեգրումը հաճախ դառնում է բնական գործընթաց, որը կարող է զարգանալ անկախ պետական միջամտությունից: Այնուամենայնիվ, պետական քաղաքականությունների աջակցությունը կարող է արագացնել և հեշտացնել այդ գործընթացը:

Նոլերթի (2016) տեսական շրջանակն առաջարկում է հարմարվողականության չորս ռազմավարություն՝ ելնելով մշակութային և սոցիալական փոխազդեցության դերից.

1. Ասիմիլյացիա. Երբ անհատը ձգտում է ինտեգրվել մեծամասնության մշակույթին, թուլացնելով ծագման մշակույթի դերը:
2. Ինտեգրում. Երբ համադրվում են ծագման մշակույթի պահպանումն ու մեծամասնության հետ սերտ փոխազդեցությունը:
3. Անջատում. Երբ առաջնային ուշադրություն է դարձվում ծագման մշակույթի պահպանմանը՝ առանց մեծամասնության հետ շփման ձգտման:
4. Մարգինալացում. Երբ և՛ ծագման մշակույթը, և՛ մեծամասնության հետ փոխգործակցությունը մնում են անկարևոր⁷:

Ինտեգրում հասկացության սահմանումը

Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) համաձայն՝ ինտեգրումը դինամիկ և բազմակողմանի գործընթաց է, որի ընթացքում նորեկները հարմարվում են ընդունող հասարակությանը, իսկ ընդունող հասարակությունը, իր հերթին, հարմարվում է նրանց: Այս գործընթացը հիմնված է փոխադարձ հարգանքի, իրավունքների պաշտպանության և սո-

6. David Lockwood, "Social Integration and System Integration," in *Explorations in Social Change*, ed. George K. Zollschan and Walter Hirsch (London: Routledge, 1964), pp. 244–257:

7. Michael Nollert et al., "Theorizing Adaptation Strategies in Migration Studies," in *Migration and Social Integration: Perspectives from Europe and Beyond*, ed. Claudia Diehl and Michael Nollert (Berlin: Springer, 2016), pp. 105–123:

ցիալական ներառման վրա: Ինտեգրումը ներառում է մի շարք ոլորտներ՝ տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքացիական, և ներառում է ոչ միայն ներգաղթյալների ադապտացիան, այլև նրանց ընդունող հասարակության պատրաստվածությունը նրանց ինտեգրումն ապահովելու համար:

Ինտեգրման ընթացքում անհատները կամ խմբերը դառնում են տվյալ հասարակության սոցիալական, մշակութային, տնտեսական և քաղաքական համակարգերի մի մաս: Այս գործընթացն ընդգրկում է նոր համայնքներում ներդաշնակ կյանք վարելու համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերումը, մասնակցությունը հասարակական կյանքին և ընդունող հասարակության արժեքների և նորմերի ընկալումը, ինչպես նաև՝ սերտ հարաբերությունների հաստատումը տեղաբնակների հետ:

Հասկանալով ինտեգրման ընդհանուր գործընթացի տեսական հիմունքները և դրա սոցիալական ու տնտեսական կարևորությունը, կարող ենք այն կիրառել Արցախի տեղահանվածների ինտեգրման կոնկրետ մարտահրավերների ուսումնասիրության մեջ: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել այն հատուկ դժվարությունները, որոնք պայմանավորված են այս խմբերի տրավմատիկ փորձառություններով:

1. **Նոր միջավայրում ինտեգրվելու սոցիալական դժվարություններ**

Միգրացիայի վերաբերյալ հետազոտությունները ցույց են տալիս, որ փախստականներն ավելի հակված են տեղաշարժվել և հաճախ փոխել կացության վայրը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով այն վայրերին, որտեղ արդեն բնակվում են իրենց համայնքի անդամները կամ բարեկամները: Այս գործընթացը, որը հայտնի է որպես «շղթայական միգրացիա», մի կողմից առաջարկում է սոցիալական աջակցություն, սակայն մյուս կողմից՝ խոչընդոտում է ամբողջական ինտեգրմանը՝ հանգեցնելով կամավոր տարանջատման (voluntary segregation): Այնուամենայնիվ, այն տարածքներում, որտեղ փախստականների բնակեցումը ապակենտրոնացված է եղել, ինտեգրման մակարդակն ավելի բարձր է⁸:

2023 թվականի Արցախից բռնի տեղահանվածների փորձառությունը նույնպես արտացոլում է այս մոդելները: Համեմատաբար ավելի սահուն է եղել այն կանանց փորձառությունը, ովքեր Հայաստանում հարազատներ են ունեցել և կարողացել են անմիջապես հաստատվել նրանց հետ: Նրանց համար ընտանիքի և համայնքի աջակցությունն ապահովել է հարաբերական կայունություն:

«Քանի, որ ամուսնուս 2 քույրերն ու էլի բարեկամներ այստեղ են ապրում, էլ կարիք չկար ուրիշ տեղ գնալու, միանգամից եկել ենք իրենց մոտ: Մի քանի ամիս միասին ենք ապրել, հետո այս տունը վարձեցինք, տեղափոխվեցինք: Հիմա 6 հոգով ենք ապրում ես երեխաներս սկեսուրս, սկեսրայրս: Քանի որ բոլոր բարեկամներով, հարազատներով այստեղ ենք, ավելի հեշտ է »: (45 տ., գյուղ. համայնք)

8. Douglas S. Massey et al., *Worlds in Motion: Understanding International Migration at the End of the Millennium* (Oxford: Oxford University Press, 1998), pp. 155–172:

**«Ծիշտ է դժվար է, բայց մենք շրջապատված ենք լավ հարազատներով, բարե-
լամներով»:** (41 տ., քաղ. համայնք)

**«Եթե հիմա իմ գործատուն մեր բարեկամը չլիներ, ես չէի էլ աշխատի: Նոր մար-
դիկ, ձայները, աղմուկը նեղում են ինձ»:** (45 տ., գյուղ. համայնք)

Սակայն այն կանայք, ովքեր չունեին հարազատներ կամ սոցիալական հենարաններ, բախ-
վել են ավելի մեծ դժվարությունների: Նրանց կեցության հարցերը սկզբնական փուլում լուծ-
վել են պետության կամ բարերարների տրամադրած ժամանակավոր կացարաններում,
որոնք հաճախ եղել են կարճաժամկետ լուծումներ:

Տեղահանվածների շրջանում շատերը ստիպված են եղել պարբերաբար տեղափոխվել
համայնքից համայնք կամ տնից տուն՝ ավելի հարմար միջավայր ու պայմաններ գտնելու
համար: Այս շարունակական տեղաշարժերը ոչ միայն խաթարել են նրանց սոցիալական
կայունությունը, այլև խորացրել են անորոշության և անկանխատեսելիության զգացումը:
Պետության կամ բարերարների աջակցությամբ տրամադրված կացարաններում կամ ծա-
նոթների տներում ապրելը նրանց հաճախ պահել է կախյալության մեջ՝ դժվարացնելով եր-
կարաժամկետ պլանավորումը, հատկապես՝ աշխատանքային զբաղվածության հարցում:

**V«Գորիսից մեզ Գյումրի են ուղարկել, հետո մեր հարևանի հետ եմ խոսել ասել
է Ոսկետափում մանկապարտեզում ենք տեղ կա, եկեք: Գնացինք մի ամսի էլ
այնտեղ մնացինք, հետո գյուղապետը ասաց ձմեռը ստեղ շատ ցուրտ է լինե-
լու, իրենք չեն սպասարկելու, մենք պիտի հոգանք: Նոր եկանք այս գյուղ»:** (29 տ.,
գյուղ. համայնք)

**«Երեխեքը, տեղահանվելուց հետո, 3 անգամ բնակավայր ու դպրոց են փոխել,
մինչև այդ էլ՝ Շուշիից Ստեփանակերտն էր»:** (36 տ., գյուղ. համայնք)

**«Գործի ընդունվելիս ասում են չենք կարող ընդունել, դուք էսօր ստեղ եք, վաղը
ստեղ չեք լինելու: Ասում եմ՝ դե գործ տվեք, որ ապրելու միջոց ունենամ չգնամ»:**
(33տ. քաղ. համայնք)

Հայաստանում, 2023 թվականի սեպտեմբերից բնակարանների վարձակալության գնե-
րի շոշափելի բարձրացումից հետո, վարձակալության խնդիրը հատկապես զգալի է փոքր
ընտանիքների համար, որոնք դժվարանում են կառավարությունից տրամադրվող 50,000
դրամի աջակցությամբ (40,000 դրամը՝ վարձի, 10,000 դրամը՝ կոմունալ ծախսերի համար)
ապահովել բավարար կեցության պայմաններ:

Թանկ վարձերի պատճառով շատ տեղահանվածներ ստիպված են ապրել մեծ ընտանիք-
ներով, որպեսզի կարողանան կիսել ծախսերը: Սա, իր հերթին, բերում է անձնական տա-
րածքի բացակայության, ինչը հատկապես դժվարացնում է վերականգնման գործընթացը:
Հետազոտությանը մասնակցած կանանց մեծ մասը բնակվում են զոհված ամուսինների
ծնողների հետ՝ բախվելով սոցիալական և կենցաղային բարդությունների, որոնք կապ-
ված են ընտանիքի անդամների խիտ բնակեցման հետ:

«Այս տանը ապրում ենք, ես, սկեսուրս 2 երեխեքս, տալս, իր սկեսուրը, իր ամուսինն ու երեխեքը՝ 10 հոգի»: (29 տ., գյուղ. համայնք)

«Հիմա ապրում ենք 7 հոգով: Ես 4 երեխաներս, մամասս ու հարսս: Հեսս երեխան պիտի ծնվի տղայիս, հարմարություններ չկան, մի փոքր մահճակալ դնելու տեղ չկա, մտածում ենք, ոնց պիտի անենք: Դե լավ տուն ես փնտրում, լավ գին են ասում, մանավանդ, որ լսում են 7 հոգի ենք, չեն ընդունում»: (44տ. քաղ. համայնք)

Կանանց պատմություններում հատկապես ընդգծվում են մահվան թուղթ ստանալու գործընթացում պետական համակարգի թերությունները, որոնք մեծ ծանրաբեռնվածություն են ստեղծել նրանց համար: Չկազմակերպված բյուրոկրատիան և աշխատակիցների տրամադրած հակասական տեղեկությունները այս գործընթացը վերածել են երկարատև քաշքշուկի և կրկնվող հիասթափության աղբյուրի:

«Սկզբից մի քանի ամիս փաստաթղթերի հարցերով Էինք, մահվան թղթի համար: Լավ Է, ընկերուհիս հետս Էր: Անձանոթ քաղաք, Երևան առաջին անգամ ենք գնացել, շատ դժվար Էր, ոնց որ Գիքորը քաղաքում լիներ: 1000 անգամ կանչեցին, կոնկրետ չԷին ասում՝ ինչ ա պետք միանգամից»: (45 տ., գյուղ. համայնք)

«Շատ դժվար Էր մահվան թուղթը վերցնելը: Էնտեղից տեղեկանք ենք բերել, որ ինքը զոհվել Է, բայց դա Էլ չի օգնել: Հոսվածի մամային , քրոջը, երեխաներին չեն տալիս, մենակ կնոջն են տալիս այդ թուղթը: Ես, Էս նորածին երեխան գիրկս, չգիտեմ որտեղից պիտի գնամ վերցնեմ: Հարց ու փորձ արեցի, տեղերը իմացա մի կերպ: Հազիվ վերցրեցի մահվան թուղթը: Ինձանից 3 ամիս պահանջեց: Ուղարկում Էին պաշտպանության նախարարություն, ասում Էին այնտեղ պիտի սարքեն, պաշտպանության նախարարությունը ասում Էր ստեղ չի սոց. բաժին պիտի գնաս, սոց բաժնից թե Էս թուղթը պիտի լինի, Էն թուղթը պիտի լինի ու հստակ ցանկ չԷին տալիս»: (41տ., քաղ. համայնք)

Թեպետ տեղահանված կանայք հիմնականում հանդիպել են ջերմ ու հոգատար վերաբերմունքի՝ հյուրընկալող ընտանիքների, կամավորների և տեղացիների կողմից, սակայն եղել են նաև որոշ տհաճ միջադեպեր, որոնք ստվերել են նրանց վերապրած դրական փորձառությունները:

«Եկանք, տան տերը մաքրություն Էր արել, ճաշ եփել, որոշ ուտելիքներ գնել, սառնարանում տեղավորել, շատ ջերմ դիմավորել Է մեզ, բանալիները տվել»: (44տ. քաղ. համայնք)

«Մթերային խանութի տերը ասել Է՝ ինչ պետք լինի վերցրու, չնեղվես... Շատ ջերմ, շատ լավ մարդիկ են»: (36 տ., գյուղ. համայնք)

Այնուամենայնիվ, նման աջակցությունը համատարած չի եղել: Կանայք նաև հանդիպել են անբարեհաճ վերաբերմունքի և նույնիսկ բացահայտ մերժման:

«Ամենապրիմիտիվ օրինակը բակի ավտոկայանատեղիում կռիվներն են. ասում են՝ Էս իմ տեղն ա, տար քո մեքենան: Տուն ես ուզում վարձով, ասում են՝ չունենք արցախցիների համար»: (33տ.,քաղ. համայնք)

Այս փորձառությունները բացահայտում են կարևոր միտում, որ ինտեգրման պրոցեսը միակողմանի չի կարող լինել: Պետք է քաղաքականություն մշակել և իրականացնել ինչպես ինտեգրվող, այնպես էլ ինտեգրող համայնքների համար:

«Իմ կարծիքով բոլոր ջանքերը մի կողմի վրա են կենտրոնացած՝ եկած արցախցիներին սովորեցնել, ոնց ինտեգրվեն: Բայց մյուս կողմի հետ, որտեղ պետք է ինտեգրվեն՝ գործ չեն անում: Կոպիտ ասած արցախցիներին բրդում են, ասում են գնացեք առաջինը նախաձեռնեք, բայց չէ որ մեծ մասը այդ ինքնավստահությունը չի ունենա, որովհետև ամեն դեպքում պարտվածի ցավը մեր մեջ ա, տվածի, անարդարության, կտորված, կորսված ...ոնց որ ծառը արմատից պոկես, ասես դե «выжубай»»: (33տ.,քաղ. համայնք)

Լեզվի ադապտացիա

Արցախցիների և հայաստանցիների հարաբերություններում հատկապես տեղափոխման առաջին փուլում սոցիալական հեռավորության պատճառ է եղել լեզվական տարբերությունը: Արցախցիների բարբառը խոչընդոտում է առօրյա շփումներին, քանի որ որոշ բառեր ու արտահայտություններ կարող են փոխադարձաբար անհասկանալի լինել: Բացի այդ, լեզվական առանձնահատկությունները հաճախ դառնում են նշանավոր առիթ՝ խմբում ուշադրություն հրավիրելու համար (բարբառ լսելիս մարդիկ հաճախ շրջվում են և նայում) և երբեմն նաև՝ պիտակավորման:

«Տրանսպորտում աղջիկս ասաց, մամ մեր լեզվով մի խոսա գրական խոսա, հետևի մարդկանց դուր չի գալիս: Ասեցի հետո ինչ, ես իրենց հետ չեմ խոսում»: (44տ., քաղ համայնք)

Բացի Արցախի բարբառի անսովոր հնչեղությունից, Արցախի բնակիչների համար նույնպես արտառոց և երբեմն անհասկանալի են Հայաստանի մարզերի բարբառները: Արցախցիները հաճախ զգում են լեզվաբանական և մշակութային անջրպետ, ինչը երբեմն արտահայտվում է լեզվական դիմադրությամբ:

«Մարտունեցիները այստեղ, որ խոսում են, բան չեն հասկանում: Ես հասկանում եմ, որ բլոկ եմ ընկնում, չեմ էլ ուզում հասկանամ: Լռովա բարբառը որ լսում էի, ասում էի՝ Ես ինչքան չոր ու ցամաք եմ խոսում, բառեր ունեն, որ շատ կոպիտ ա»: (33տ.,քաղ. համայնք)

Այսպիսի արտահայտություններ վկայում են այն մասին, որ լեզվական տարբերությունները կարող են խորացնել տեղահանվածների օտարացման զգացումը: Լեզուն այստեղ դառնում է ոչ միայն հաղորդակցության միջոց, այլև մշակութային ինքնության պահպանման կամ դիմադրության գործիք:

«Օրինակ ասում են բրախի: Ասում եմ՝ ոնց երեխուն բրախի, շուն ա ինչ ա: Հետո հասկացա, որ դա դիմադրություն էր իմ կողմից. եթե արցախի բարբառով չենք խոսում, ուրեմն լռովա բարբառով էլ չենք խոսա»: (33տ.,քաղ. համայնք)

Այս դիտարկումները կարևոր են հասկանալու համար, թե ինչպես են լեզվական և մշակութային տարբերությունները ազդում ինտեգրման գործընթացի վրա: Բարբառային առանձնահատկությունները ոչ միայն հաղորդակցության խոչընդոտ են, այլև ինքնության և պատկանելության զգացմունքի արտահայտման ձև:

Հասարակական կապեր

Կանանց պատմություններում ընդգծվում է իրենց նախկին (Արցախում) և ներկայիս (ՀՀ-ում) փորձառությունների տարբերությունը: Արցախում ձևավորել էր ուժեղ համայնքային կապեր՝ հարևանների, բարեկամների և ընդհանրապես համայնքի անդամների միջև: Սոցիալական այս մերձեցվածությունը կտրուկ հակադրվում է Հայաստանի տեղափոխվելուց հետո առաջացած իրավիճակին: Նոր ծանոթություններ հաստատելու համար բավական ժամանակ է պահանջվում. օրինակ՝ մի տարի բնակվելուց հետո էլ մարդիկ կարող են չճանաչել իրենց հարևաններին: Օտարվածության զգացողությունը հատկապես սրվում է բազմաբնակարան շենքերում, որտեղ հարևանների միջև գրեթե կապեր չկան, և հարաբերություններն ուղեկցվող սոցիալական պրակտիկաներով գրեթե բացակայում են:

«Որ ասեմ հարևաններ գալիս-գնում են, կամ եկել հարցրել են ինչ ա եղել, ոնց ա եղել՝ ոչ: Դիմացի հարևանս դեր չգիտի մենք քանի հոգով ենք ստեղ ապրում, մի տարի ա ստեղ ենք: Մենք Արցախում հարևաններով, նույնիսկ կերակուր Էինք պատրաստում, ժենգյալով հաց թխում միասին»: (41 տ., քաղ. համայնք)

«Լավ հարևաններ ունենք, բայց ստեղ ոնց որ իրար հետ շատ չեն շփվում, չեն գնում, չեն գալիս: Իմ հին հարևանները մինչև հիմա գնում-գալիս են»: (45տ., գյուղ. համայնք)

Մեծ քաղաքներում այս իրավիճակն էլ ավելի է ուժեղացնում մարդկանց «ատոմացված»

զգացումը և բազմամարդ միջավայրում միայնակ լինելու տպավորությունը: Սակայն միանգամայն այլ է գյուղական համայնքերում բնակություն հաստատած կանանց փորձառությունները:

«Որ եկանք ոչ մի բան չկար էս տանը, հարևանները մեկը աթոռ տվեց, մեկը մահճակալ, մեկը անկողին, տենց տեղավորվեցինք: Հարցնում են ինչի կարիք ենք զգում մինչև հիմա: Դիմացի հարևանի հետ ենք շփվում, կողքի հարևանի հետ»: (29տ., գյուղ. համայնք)

«Հսոր մեր հարևանի ամուսնու ծնունդն էր, ստեղ ադաթ ա իրենց բախում սուրճ են դնում հարևաններին կանչում, մենք էլ գնացինք»: (36տ., գյուղ. համայնք)

Այս փորձառությունները ցույց են տալիս, որ համայնքային կապերի առկայությունն ու որակը մեծապես կախված են բնակավայրի բնույթից: Եթե մեծ քաղաքներում սոցիալական օտարվածությունն ու փոխհարաբերությունների պասիվությունը խոչընդոտում են վերականգնմանը, ապա գյուղական համայնքներում տեղացիների կողմից ցուցաբերված աջակցությունն ու համատեղ սոցիալական արակտիկաները նպաստում են ինտեգրման գործընթացին՝ մեղմելով անցումային դժվարությունները:

2. Հոգեբանական մարտահրավերներ ինտեգրման փուլում:

Պատերազմի հետևանքով բռնի տեղահանված կանանց՝ հատկապես այրի կանանց համար, ինտեգրումը նոր միջավայրում ուղեկցվում է լուրջ հոգեբանական մարտահրավերներով: Արցախի կորստի ցավը նրանց համար համադրվել է սիրելիի մահվան ցավի հետ՝ ներառելով վշտի բոլոր դասական փուլերը՝ ժխտում, զայրույթ, պայքար իրականության հետ, դեպրեսիա և վերջնական համակերպում: Սակայն այս գործընթացը հաճախ բարդանում է սոցիալական միջավայրի ճնշումներով, կենցաղային դժվարություններով և հասարակական կարծրատիպերով, որոնք խանգարում են վշտի բնականոն հաղթահարմանը:

Հետազոտությանը մասնակցած կանանցից միայն 2020 թվականին այրիացած կնոջ փորձառությունն է ընդգրկել Զյուբեյր-Ռոսի վշտի վերապրման մոդելի բոլոր փուլերը: Մյուս կանայք, անգամ տեղահանությունից երկու տարի անց, դեռևս չեն անցել այս գործընթացի բոլոր փուլերը՝ մնալով վշտի բարդ փուլերում:

«Երեխեքի դասերով էլ չեմ կարում զբաղվեմ, շատ հուսահատված, հիասթափված եմ ամեն ինչից, ոչ մի հետաքրքրություն չունեմ: Էն որ ոչ մի բանից հաճույք չստանաս, ոչ մի բանից չուրախանաս, ոչ մի տեղ չուզես գնաս, մարդ չուզես տեսնել ...տենց վիճակում եմ»: (29տ., գյուղ. համայնք)

«Ոնց որ քո «ես»-ը մի հատ նորից կորցնես, հետո փորձես էլի ինչ-որ բան կառուցես»: (33տ., քաղ. համայնք)

Պատերազմի հետևանքով այրիացած կանայք հաճախ հայտնվում են հասարակության ուշադրության կենտրոնում բարձրանալով հերոսական կարգավիճակի, որն ուղեկցվում է համակրանքով և աջակցությամբ: Սակայն այս «հերոսության» ընկալումը հիմնականում պայմանավորված է նրանց «խեղճացածության» շարունակականությամբ: Երբ կանայք փորձում են վերականգնել իրենց կյանքը, հասարակության վերաբերմունքը փոխվում է. աջակցությունը վերածվում է քննադատության:

Այրի կանայք հասարակության կողմից ընդունվում են միայն այն դեպքում, երբ նրանք խաղաղ և անպահանջ են իրենց վշտի հետ: Նրանք պետք է հարմարվեն այն կերպարին, որն ընդունելի է հասարակության համար, հակառակ դեպքում նրանց վերականգնման ցանկացած փորձ ընկալվում է որպես անզգայություն: Նման փորձառություն է ունեցել 2020 թվականին այրիացած երիտասարդ կինը:

«Եթե դու նույն օղակի մեջ ես մնում, կարծրատիպերի մեջ ես մնում՝ վայ մարդիկ ինչ կասեն, բնական է, դու չես կարող ոչ մի բան փոխել քո կյանքում: Պիտի նստես, դառնաս իրենց ուզած Էն կերպարը, հետո մեկ, երկու, երեք, ասեն՝ Էդ սև շորդ Էլ, ամեն ինչդ Էլ հոգնեցրեց, հերիք ու բոլ եղավ»: (33տ.,քաղ. համայնք)

Հասարակական ճնշումն առավել ակնհայտ է դառնում, երբ կանայք փորձում են կյանքը վերականգնելու փոքր քայլեր անել:

«Ամուսնուս հուղարկավորումից 2 ամիս հետո երեխեքիս ուրախացնելու համար գնացինք ծնունդ: Առաջին օրն Էր, որ այդքան ժամանակ անց թեթև շպարվել Էի: Հետո այդ օրվա նկարն Էի հրապարակել, ինձ ասացին՝ տեսնում ենք, ոնց ես սգում»: (33տ.,քաղ. համայնք)

Այս փորձառությունները վկայում են, որ հասարակությունը սպասում է, որ կանայք շարունակեն մնալ իրենց վշտի մեջ՝ նրանց վերականգնման ցանկացած փորձ գնահատելով որպես անհարգալից վերաբերմունք կորուստի հանդեպ:

«Էդ ա հասարակության ուզածը, դու ոչ մի տեղ չլինես, պիտի ուրախ չլինես, խեղճացած լինես, քեզ պահեն, հետո ասեն մենք ենք արել»: (33տ.,քաղ. համայնք)

Չնայած բոլոր դժվարություններին՝ այրի կանանց մոտ նկատվում է ուժեղ կամք և հանձնառություն՝ երեխաների համար բնականոն կյանք ապահովելու համար: Նրանք հաճախ իրենց անձնական ցավն ու ապրումները հետին պլան են մղում, որպեսզի շարունակեն ամուրի հենարան լինել երեխաների համար:

«Որոշեցի, որ իմ երեխեքը չպետք է խեղճանան: Անկախ նրանից՝ ես ինչ վիճակում Էի, կողք Էի դնում իմ ապրումները ու երեխեքի հետ Էի անցկացնում, ամեն տեղ տանում Էի»: (33տ.,քաղ. համայնք)

Այս մոտեցումը նաև ուժ է տալիս կանանց՝ շարունակելու իրագործել այն ծրագրերը, որոնք միասին էին մտածել իրենց զուգընկերոջ հետ, ևույնիսկ եթե ստիպված են դրանք իրականացնել միայնակ:

«Էդ էլ ա ուժ տալիս, որ Էն ինչ միասին ծրագրել էին, մտածել էին, Էդ պիտի արվի՝ թեկուզ մենակ»: (33տ.,քաղ. համայնք)

Այս փորձառությունները վկայում են, որ կանանց համար երեխաների բարեկեցությունը դառնում է վերականգնման և կյանքի շարունակականության հիմնական շարժիչ ուժը:

Նշանակալից է, որ բազմաթիվ կանայք իրենց անձնական ցավն ու փորձառությունները կապում են մոր անցյալի պատմությունների հետ՝ այդպիսով վերապրելով և վերաիմաստավորելով իրենց կարգավիճակը: Այս համատեքստում նրանց վիշտն ու տագնապները հաճախ ուղղվում են դեպի երեխաների ապագան՝ մտահոգությամբ, որ ևույն ողբերգական շրջանը կարող է կրկնվել նրանց համար:

«Բոլորն էլ արել են: Նույն 91-ին մամաս Էնքան ծանր օրերի մասին ա պատմել, ոնց որ ուզում էին մեզ պատրաստեն այսօրվա համար: Դժվար ա և կրելը, և պատկերացնելը, որ հետո ինչ կարա լինի: Մտածում ես՝ մի օր էլ իմ երեխու ամուսնու հետ չլինի դա, ինքը նորից այս նույն բանի մեջով չանցնի»: (33տ.,քաղ. համայնք)

Կանանց համար այս մտահոգությունները կապված են ոչ միայն իրենց երեխաների ֆիզիկական անվտանգությամբ, այլև նրանց հոգեբանական և սոցիալական բարեկեցությամբ: Նրանք ցանկանում են կոտրել այդ ցիկլը՝ հույս ունենալով, որ իրենց երեխաների կյանքում պատերազմը վերջապես կմնա անցյալում:

«Կարևորը՝ աղջիկս իմ բախտը չունենա: Ուզում եմ վերջանա Էս պատերազմները: Թուրքին էլ չեմ ուզում բան լինի, Էս ինչ ա, սաղ կյանքներս պատերազմ տեսանք»: (41տ., քաղ. համայնք)

Այրի կանանցից ոմանք անձամբ են անցել ծնողի կորստի ցավի միջով և այժմ, լինելով նույն իրավիճակում, հատկապես սուր են զգում իրենց երեխաների վերապրումի ծանրությունը:

«Ես երեխուս տարիքին եմ եղել, որ պապայիս կորցրել եմ: Մեծացել եմ, բայց ոնց եմ մեծացել, մենակ մենք գիտենք»: (29տ. գյուղ. համայնք)

Պատմությունները վկայում են, որ կանայք ոչ միայն ապրում են իրենց կորստի ցավը, այլև ձգտում են կոտրել պատերազմների և տառապանքի շարունակական շղթան՝ երագելով իրենց երեխաների համար խաղաղ ու կայուն ապագա:

3. Հարմարվողականության մեխանիզմներ և սոցիալական աջակցության ցանցեր

Հետպատերազմյան վերականգնման և ինտեգրման գործընթացում կանանց համար հոգեբանական և սոցիալական աջակցությունը կենսական նշանակություն ունի: Աջակցության տարբեր ծրագրերից օգտվելու կանանց փորձառությունները զգալիորեն տարբերվում են: Որոշ կանայք մասնակցել են հոգեբանական և մասնագիտական ծրագրերի և բարձր գնահատել դրանց ազդեցությունը՝ նշելով, որ նման նախաձեռնությունները հնարավորություն են տվել ոչ միայն վերախմաստավորելու իրենց հոգեվիճակը, այլև ձեռք բերելու նոր հմտություններ:

«Մասնակցել եմ բիզնես ծրագրերի, որոնք շատ օգնեցին: Քո միտքը ուրիշ տեղ է աշխատում, նոր մարդկանց ես հանդիպում, մթնոլորտից դուրս ես գալիս»: (33տ., քաղ. համայնք)

Մյուսները թերահավատորեն են մոտենում հոգեբանական աջակցությանը՝ համարելով, որ այն չի կարող փոխել իրենց իրավիճակը:

«Հոգեբանը ինչ պիտի ասի, հո ասելով չի: Չէ, ես հոգեբանի կարիք չունեմ»: (45տ., գյուղ համայնք)

Որոշ դեպքերում աջակցման կարևոր գործոն է դարձել հավատը և հոգևորականների հետ զրույցները, որոնք օգնել են հաղթահարել հոգեբանական ծանրությունը:

«Մի հավատացյալ կին օգնեց ինձ դուրս գալ էդ վիճակից: Ամեն օր գալիս էր հետս զրուցում, շատ օգնեց»: (41տ., քաղ. համայնք)

Միևնույն ժամանակ, ծրագրերից օգտվելու հնարավորություններն անհավասար են եղել: Ակտիվ և կապերի լայն շրջանակ ունեցող կանայք հաճախ ավելի հեշտությամբ են ներգրավվել տարբեր նախաձեռնություններում, մինչդեռ մյուսները մնացել են դուրս՝ խոչընդոտված տեղեկացվածության պակասով կամ բյուրոկրատական արգելքներով:

«Որոշ մարդիկ երեք տեղ գնացել են, սովորել, չորորդն էլ իրենց են տալիս, իսկ նրանք, ովքեր չեն օգտվել, դուրս են մնում: Դա արդարության բացակայություն է, որը հետագայում ուրիշ կառույցների հանդեպ էլ անվստահություն է ձևավորում»: (33տ., քաղ. համայնք)

Այս փորձառությունները վկայում են, որ աջակցման ծրագրերը պետք է ոչ միայն բազմազան լինեն, այլև հավասարապես հասանելի բոլոր շահառուների համար՝ հաղթահարելու համար սոցիալական, տեղեկատվական և հոգեբանական խոչընդոտները:



ԱՊԱԳԱՅԻ ՅԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Արցախից բռնի տեղահանված կանայք, չնայած անցյալի ցավոտ փորձառություններին, իրենց ապագան կապում են Հայաստանի հետ: Շատերի համար սա ոչ միայն հայրենիք է, այլև ավելի մոտ կապի կետ Արցախի և այնտեղ մնացած ամուսինների շիրիմների հետ: Նրանց առաջնային նպատակներից է ամուսինների արտաշիրիմումն ու շիրիմների տեղափոխումը Հայաստան, ինչը դառնում է թե՛ հոգեբանական խաղաղության, թե՛ ապագայի համար կայունության կարևոր բաղադրիչ:

«Առաջնային նպատակս ու երազանքս էն ա, որ կարողանանք արտաշիրիմում ասենք, բայց իմանամ էլի որ հենց ինքն ա, չխաբեն, բերենք, նորմալ թաղենք, գերեզման ունենանք»: (44տ. քաղ. համայնք)

Տունը նրանց համար ոչ միայն ֆիզիկական ապահովություն է, այլև ապագայի կայունության սիմվոլ: Շատերը երազում են ունենալ սեփական անկյուն, որտեղ իրենց երեխաները կզգան անվտանգ և ապահով:

«Միակ նպատակս էն ա, որ կարողանամ մի տուն ձեռք բերել, որ իմանամ երեխերս ապահով են»: (44տ., քաղ. համայնք)

Բացի դրանից, աշխատանքի կարևորությունը նշվում է բոլոր գրուցակիցների կողմից: Կանայք ցանկանում են գտնել աշխատանք՝ ոչ միայն ֆինանսական անկախություն ունենալու, այլև սոցիալականացնելու, համայնքի մաս դառնալու և ներքին խաղաղություն գտնելու համար:

«Ես չեմ ամաչում աշխատանքից, ցանկացած գործ լինի՝ աշխատեմ: Գուե տնից դուրս գամ մի քիչ՝ ցրվեմ, փող աշխատեմ»: (29տ., գյուղ համայնք)

Այս ցանկությունները վկայում են, որ տեղահանված կանայք ձգտում են իրենց կյանքը նորից կառուցել, հաղթահարել անցյալի ցավը և ամուր հիմքեր դնել ապագայի համար: Նրանց առաջնահերթությունները՝ տուն ունենալը, աշխատելը և սոցիալականացում գտնելը, կարելի է դիտարկել որպես կյանքի վերականգնման և նոր հույսերի հաստատման գործընթացի կարևոր քայլեր:



ԱՄՓՈՓՈՒՄ

Այս Էսսեն խորը ուսումնասիրություն է Արցախի բռնի տեղահանված այրիների փորձառությունների մասին՝ ընդգծելով նրանց բախած սոցիալական, հոգեբանական և մշակութային մարտահրավերները: Այնուամենայնիվ, այս աշխատանքը միայն փաստական հիմք չէ: Դա նաև ռեֆլեքսիա է այն բարդությունների և ներհոգեկան շերտերի մասին, որոնք առաջանում են նման բարդ թեմաների ուսումնասիրության ժամանակ:

Ինձ համար այս հետազոտությունը շատ ավելի անձնական էր, քան կարող էի պատկերացնել: Որպես այն անձանցից մեկը, ով նույնպես անցել է տեղահանման և ինտեգրման փուլերը, ես հայտնվեցի այս հարցերի կենտրոնում ոչ միայն որպես հետազոտող, այլ նաև որպես նրանց փորձառությունները կենդանի զգացողությամբ ապրող մարդ: Հետազոտությունը համարեցի նաև իմ սեփական ճանապարհի համատեքստում վերապրում ու վերլուծություն կատարելու հնարավորություն: Սա ինձ թույլ տվեց ավելի շատ հասկանալ այն, ինչ անցել ենք և շարունակաբար անցնում ենք՝ որպես տեղահանված մարդիկ: Միաժամանակ, ես տեսնում էի, թե ինչպես եմ ինքս անցել այս գործընթացների միջով՝ սոցիալական ինտեգրումն ու անհանգստությունը երբ փորձում ես ստեղծել նոր կյանք ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես:

Կանանց պատմությունները կարևոր են ոչ միայն դրանցում ներկայացված անձնական ապրումների համար, այլև որպես վկայություն այն հասարակական և մշակութային համատեքստերի մասին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն սահմանում են նրանց կյանքն ու ապագան:

Էսսեն բացահայտում է մի քանի հիմնարար թեմաներ.

Կորուստի խորությունն ու դրա հաղթահարումը

Կանայք բախվում են կորուստի բազմաշերտությանը, որը ներառում է տան, համայնքի, ընտանիքի անդամների և մշակութային ժառանգության կորուստ: Տունը, որպես հիշողությունների, ընտանիքի և անվտանգության խորհրդանիշ, կորցնելը նրանց կյանքում վերապրումների ամենածանր շերտերից է: Ամուսինների շիրիմների տեղափոխման հարցն արտացոլում է նրանց կարիքը՝ վերագտնելու հոգեբանական խաղաղություն և կապը կորցրած անցյալի հետ:

Սոցիալական հարաբերությունների փոփոխությունը.

Արցախում ձևավորված մերձեցված համայնքային կապերը հակադրվում են Հայաստանի քաղաքային և գյուղական համայնքներում հանդիպող սոցիալական օտարացմանը: Մեծ քաղաքներում բազմաբնակարան շենքերի միջավայրում հարաբերությունների պասիվությունը խոչընդոտում է ինտեգրմանը: Այնուամենայնիվ, գյուղական համայնքներում պատմությունները ցույց են տալիս, որ ինտեգրման գործընթացն ավելի արդյունավետ է ընթանում, քանի որ գյուղերում մարդիկ հաճախ ավելի աջակցող են, կապերը՝ ավելի անմիջական:

Հոգեբանական մարտահրավերները.

Տրավմաների հաղթահարման գործընթացը հաճախ բարդանում է հասարակական կարծրատիպերով և հասարակության պահանջներով, որոնք կանանց ստիպում են իրենց վիշտն ապրել լռելյայն ու առանց որևէ օգնության դիմելու: Վշտի բնականոն հաղթահարման հնարավորությունները սահմանափակվում են նաև համապատասխան հոգեբանական աջակցության հասանելիության բացակայությամբ: Այնուամենայնիվ, նկատվում է, որ այն կանայք, ովքեր մասնակցել են հոգեբանական աջակցման ծրագրերին, ավելի լավ են կարողացել հաղթահարել իրենց դժվարությունները և հոգեբանորեն ավելի ամուր են եղել: Այս փորձը նրանց օգնել է մշակել արդյունավետ հաղթահարման մեխանիզմներ և վերականգնել իրենց կյանքի նկատմամբ վերահսկողության զգացումը: Նրանք, ովքեր որևէ աջակցություն չեն ստացել, հաճախ ավելի խոցելի են եղել, շարունակում են կրել մեկուսացվածության զգացում և դժվարությամբ են դիմակայում առօրյա մարտահրավերներին:

Աջակցության անհավասար հասանելիությունը.

Տարբեր ծրագրերից օգտվելու անհավասար հնարավորությունները խոչընդոտում են բոլոր կանանց հավասար աջակցություն ստանալու հնարավորությունը: Նրանք, ովքեր մասնակցել են աջակցության ծրագրերին շեշտում են դրանց դրական ազդեցությունը: Այս ծրագրերը ոչ միայն օգնել են հաղթահարելու տրավմաները, այլև նպաստել են նոր հմտությունների ձեռքբերմանը և սոցիալականացմանը: Մյուսները, ովքեր որևէ ծրագրից չեն օգտվել, շարունակում են զգալ աջակցության պակասը, ինչը խանգարում է իրենց ինտեգրմանը:

Աշխատանքի և ինքնուրույնության ձգտումը.

Կանայք նշում են, որ աշխատանքի և սոցիալականացման հնարավորությունները կարևոր են իրենց կյանքի վերակառուցման համար: Աշխատանք գտնելը նրանց համար ոչ միայն եկամտի աղբյուր է, այլև հնարավորություն՝ դուրս գալ մեկուսացումից, գտնել նոր սոցիալական կապեր և վերագտնել իրենց տեղը հասարակության մեջ:

Էսսեն ևս մեկ անգամ ցույց տվեց, թե որքան կարևոր է լսել և արձանագրել կանանց ձայները, որոնք հաճախ խլացվում են պատերազմների և տեղահանությունների պաշտոնական նարատիվների մեջ: Այս պատմությունները ոչ միայն արտացոլում են ցավն ու կորստի խորությունը, այլև ցույց են տալիս, որ նույնիսկ ամենաձանր պայմաններում մարդիկ փնտրում են վերակառուցման ուղիներ: Այն ամենաշատը տպավորեց ինձ, որ չնայած բազմաթիվ դժվարություններին, շատ կանայք պահպանել են իրենց ուժն ու հաստատակամությունը՝ ապահովելու իրենց երեխաների ապագան:

Անձնական մակարդակում այս աշխատանքը հնարավորություն տվեց վերաիմաստավորելու պատերազմի, կորուստի և վերապրման հայեցակարգերը: Դա ոչ միայն հետազոտություն էր մյուսների մասին, այլև մի ուղի՝ հասկանալու, թե ինչպես եմ ես՝ որպես անհատ և որպես մի մեծ հանրության մաս, կապվում այս պատմություններին: Այդ կանայք ինձ սովորեցրին, որ կյանքը, նույնիսկ իր ամենաձանր դրսևորումներում, կարող է շարունակվել՝ եթե կա նպատակ, դիմադրության կամք և համայնքի աջակցություն:

Էսսեն մի կամուրջ դարձավ՝ իմ և ուսումնասիրած պատմությունների միջև: Այն երկխոսություն էր՝ հուշերի, փորձառությունների և ապագայի մասին ընդհանուր տեսլականի շուրջ:

Այս աշխատանքը ցույց է տալիս, որ մարդկային պատմությունները ոչ միայն վերապրումի վկայություն են, այլև արտացոլում են այն բարոյություններն ու դիմակայության գործընթացները, որոնց միջով անցնում են մարդիկ՝ փորձելով գտնել կայունության և նոր կյանքի հնարավորություններ անդառնալի կորուստների պայմաններում:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության կառավարություն: «Տեղահանման վերաբերյալ պաշտոնական հայտարարություն»: Հասանելի է 27 նոյեմբերի 2024 թ.: <https://www.gov.am/en/news/item/10371/>:
2. Հայաստանի հետաքննող լրագրողներ: «Ազգությամբ գտման և պատերազմի հանցագործությունների վերաբերյալ հետաքննության գործընթացի ամփոփում»: Հասանելի է 27 նոյեմբերի 2024 թ.: <https://www.investigative.am/en/news/summery-on-the-process-of-investigation-of-cases-on-ethnic-cleansing-committed-in-nagorno-karabakh-and-war-crimes-committed-during-it>:
3. Սոցիոսկոպ ՀԿ: «Պատերազմը կնոջ դիտանկյունից» «Կանայք հանուն խաղաղության» արշավի մասին»: Հասանելի է 27 նոյեմբերի 2024 թ.: https://socioscope.am/archives/3347#_ftn35:
4. Parsons, Talcott. *The Social System*. London: Routledge & Kegan Paul, 1951:
5. Enloe, Cynthia. *Bananas, Beaches and Bases: Making Feminist Sense of International Politics*. Berkeley: University of California Press, 1990:
6. Lockwood, David. "Social Integration and System Integration." In *Explorations in Social Change*, edited by George K. Zollschan and Walter Hirsch, 244–257. London: Routledge, 1964:
7. Nollert, Michael, et al. "Theorizing Adaptation Strategies in Migration Studies." In *Migration and Social Integration: Perspectives from Europe and Beyond*, edited by Claudia Diehl and Michael Nollert, 105–123. Berlin: Springer, 2016:
8. Massey, Douglas S., et al. *Worlds in Motion: Understanding International Migration at the End of the Millennium*. Oxford: Oxford University Press, 1998:

